ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք.Երևան, Արգիշտիի 1

№ 61/1141 «14» 12 2017թ.

«ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ
Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.02.2017 թվականին կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/79» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը ստանձնել է Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետին հասցեագրված Ձեր 13.12.2017 թվականի գրության համաձայն՝ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊ ընկերությունը դատարանի 18.10.2017 թվականի ԵԿԴ/0185/04/17 վճռով ճանաչվել է սնանկ և 20.10.2017 թվականին դուք նշանակվել եք սնանկության գործերով կառավարիչ:

Վերը նշված գրությամբ հայտնել եք նաև, որ Ընկերությունը չի կարող կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի հրաժարվում է կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Գ. ՉԹՐՅԱՆ

Կատարող՝ Գ.Մուրադյան
010 514-194